վարդապետ առ դատաւորն ստուգել զիրսն։ Եւ նա ժողովեալ զբազմութիւնս այլազգեաց 'ի դատարան, կոչեաց և զկրօնաւորս Լատինաց եւ ընթերցաւ առաջի ամենեցուն զհրովարտակն. եհարց ապա ցԼատինս, ո՛վ ոք յայլազգեաց աստի նեղեաց զձեզ և զրկեաց, և կամ յափշտակեաց զինչս ձեր, որպէս չարախօս լեալ էք առ Արքայ, և նոքա յուրաստ եղեալ ասեն. ոչ բողոքեցաք 'ի Դուռն, ոչ այլազգիք նեղեցին զմեզ և կամ արկին տուգանս 'ի վերայ մեր, եւ կամ յափշտակեցին զինչս. այլ միայն երեք կրօնաւորք մեր հարին զվարդապետն Հայոց, և այն օրինօք դատարանի հաստատեցաւ 'ի վերայ նոցա։ Լուեալ դատաւորին զխոստովանութիւն բանից նոցին առաջի բազմութեան այլազգեաց՝ արձանացոյց 'ի գիր, եւ արարեալ հանրագիր առաքեաց 'ի Դուռն։

Գրեալ էին նաեւ Լատինք առ Կուսակալն Դամասկոսի Սիւլէյման Փաշա, և նա գրեաց առ դատաւորս Երուսաղէմի, և առաքեաց 'ի ձեռն պաշտօնէի միոյ, որ կոչէր Գատրի աղա, ստուգել զխնդիրն։ Դարձեալ կազմեցաւ ժողով 'ի դատարանի՝ կոչեցան եւ միաբանք Լատինաց, ընթերցաւ գիր Կուսակալին. ապա եհարց Գատրի ցմիաբանս Լատինաց, ով ոք 'ի սոցանէ և կամ յայլազգեաց Երուսաղէմի բռնացաւ 'ի վերայ ձեր և էարկ զձեզ 'ի տուժս և 'ի տուգանս ընդդէմ օրինաց և դատաստանաց, և նոքա ասեն՝ և ոչ ոք, և չունիմք գանգատանս զումեքէ. և դատաւորն հանդերձ ժողովով հաստատեաց զբանս նոցա 'ի գիր, եւ տուեալ 'ի ձեռս Գատրի աղայի առաքեաց 'ի Դամասկոս, ՌՃՂԱ (1742)։

Յետ այսր դատաստանաց՝ ձեռն արկին Լատինք և յայլ իմն գործ, զոր խորհեալ էին. զի պատճառէին թէ հընացեալ է Գերեզմանն Քրիստոսի, որոյ վասն պարտ է քակել զայն, զհողս և զքարինս նորին փոխադրել յԵւրոպա յաշխարհն իւրեանց. լուեալ զայս Իպրահիմ աղայի վերատեսչի կալուածոց Սիւլէյմանայ Արքայի՝ ազդ արար 'ի Դուռն, թէ Լատինք պատճառանօք կամին նորոգել եւ կամ նորոգ շինել զԳերեզմանն, և զրկել անտի զայլ քրիստոնեայս։ Վաղ ընդ փոյթ եհաս հրովարտակ յԵրուսաղէմ, խափանել զայնպիսի ձեռնարկս Լատինաց. զի տուեալ էր